

ՊԱՆՈՒՆԱԿԱՆ

محلّة جمعيّة القاهره الخيريّة الارمنيّة العامّة

ՏԵԶԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԼՏԻՐԷԻ Հ.Բ.ԸՄՈՒԹԵԼՆ

ԻԱ ՏԱՐԻ ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 1978

المدير المسؤول : ه. هميجيان - ١٥ شارع عماد الدين بالقاهرة - تليفون ٩١٩٦٣٦ - ص ب ٧١٧



Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Այս թիւով

Նախագահ Ա. Մանուկեանի շնորհաւորական զիրր Ամենայն Հայոց Հայրապետին	էջ 8
Գերշ. Տ. Զաւէն Ս. Եպս. Չինչինեանի այցր Ս. Էջմիածին	էջ 5
Գործելու անհրաժեշտութիւնը	էջ 6
Բանաստեղծութեան եւ Արուեստի վրայ	էջ 7
Երաժշտագէտ-ղաշնակահար Շահան Արծրունիի զոյգ նուագահանդէսները	էջ 8
Հաւաստումներ	էջ 9
Հ.Բ.Ը.Մ.ի անմիջական օգնութիւնը Լիբանանահայութեան	էջ 10
Հայ Լեզու	էջ 11
Քաղուածքներ Հ.Բ.Ը.Մ.ի 65րդ Ընդհանուր Ժողովի Ատենազրուութենէն	էջ 13
Հ. Բ. Ը. Մ.ի կեանքէն	էջ 14
Հ. Մ. Ը. Մ.-նուպարի կեանքէն	էջ 15
Հ. Բ. Ը. Մ.ի Մոնթրէալի սկաուտական հաւաքատեղիին բացումը	էջ 16

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

ՇՆՈՐՀԱԽՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

(Սեպտեմբեր 7, 1978

Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱՋԳԷՆ Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց
Ս. Էջմիածին, Հայաստան

Վեհափառ Տէր,

Ամէն իրաւ Հայու նման՝ մեզի համար ալ անկեղծ ու ջերմ բաղձանք մըն էր անձամբ ներկայ դանուիլ Վեհիդ ծննդեան Եօթանասնամեակի հանդիսութեանց եւ մեր որդիական սէրն ու հաւատարմութիւնը բերել Ձեզի. սակայն հարկադրիչ պատճառներով՝ պիտի չկարողանանք Էջմիածնի դարաւոր կամարներուն ներքեւ անձամբ Ձեր աջն առնել եւ սիրտի մեր խօսքը ըսել Ձեզի. այդ պատճառաւ ալ կը փափաքինք մեր զգացումները փոխանցել Ձեզի սոյն գիրին միջոցաւ:

Այս օրերուն ամբողջ Սփիւռքահայութիւնը իր աչքերը դարձեալ կ'ուղչէ դէպի Սուրբ Էջմիածին, հողեւին մասնակցելու համար Նորին Սրբութեանդ Եօթանասնամեակի տօնակատարութեանց:

Ձեր կեանքը լոկ անհատի մը կեանքը չհանդիսացաւ երբեք, այլ ան լեցունեցաւ Հայ ժողովուրդի ժամանակակից պատմութեամբ, անոր խինդերով ու վիշտերով, երազներով ու յաղթանակներով: Մասնաւորաբար Ձեր կեանքին վերջին երկու տասնամեակները նուիրուեցան հոմայն Հայութեան հողէն առաջնորդութեան դործին, երբ Ձեր շնորհալի անձով բախտաւորուեցաւ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի դարաւոր Գահը: Ձեր կեանքն ու անունը նոյնացան Սուրբ Էջմիածնի հետ, եւ այդ պատճառով Աթոռի առաքելութիւնը շարունակելու քաղցր լուծը վստահուեցաւ Ձեր հոգեկան զօրութեան, իմացական պայծառութեան եւ շինարար կամքին, այդ առաքելութիւնը տարիք խոնարհութեամբ ու վեհութեամբ: Ձեզմէ հասնող պատմութեան ձայնով ա-

ոաջնորդուեցաւ Սփիւռքի Հայութիւնը. Ձեր միխթարական խօսքերով
զօտեպնդուեցաւ ան եւ Ձեզմով նորոգեց իր հաւատքը հանդէպ Սուրբ Էջ-
միածնին եւ իր նախահայրերու նուիրական հողին:

Բախտաւոր է Հայ ժողովուրդը որ եօթանասնամեակի սեմին ունի կեն-
սունակութեամբ եւ ստեղծագործական եռանդով լի Հոգեւոր Գերագոյն պետ
մը, յանձին Վեհափառութեանդ:

Երազի համազօր բարձաթիւ ծրագիրներ ու նպատակներ իրագործուեցան
Ձեր գահակալութեան օրհնաբեր տարիներուն. Ձեր հայրապետական կեան-
քը խորհրդանշուեցաւ բեղուն շինարարութեամբ, հոգեւոր յաղթանակներով
եւ դէպի ապագան ձգտող բարի յոյսերով:

Ձեր Հայրապետական սիրտը վրդովեցաւ նաեւ Հայաստանեայց Եկեղե-
ցին խոցող տխուր տազնապնդով. Ձեր վճիտ հոգին, սակայն, միշտ բարու-
թիւն եւ լաւատեսութիւն ճառագայթեց: Ձեր սրտցաւ խօսքերով, յորդոր-
ներով, գիրերով եւ ուղեւորութիւններով համերաշխութեան սերմեր սրփ-
րեցիք ամէն կողմ:

Վեհափառ Տէր,

Վստահ ենք թէ Ձեր կեանքին այս կարեւոր հանգրուանին, երբ կը դի-
տէք Ձեր ետին՝ Ձեր Հայրապետական սիրտը կը յորդի Ձեր շինարար գոր-
ծերուն գոհունակ ուրախութեամբ. նոյն ատեն սակայն, ան կը խոցուի մեր
եկեղեցական կեանքը խռովող տխուր իրականութիւններով. ու կարծէք այս-
օր Ձեր բեղուն կեանքին նպատակը կը մնայ ամբողջական իրականացումը
Հայաստանեայց Եկեղեցւոյ միասնականութեան:

Ձեր կեանքին այս տօնական հանգրուանին մեր ալ սրտադին մաղթանքը
պիտի ըլլար որ կարենայիք իրագործել այնքան ցանկալի եկեղեցական միու-
թիւնը, որ Ձեր հայրապետական գահակալութեան շքեղ իրագործումներուն
փառապսակը պիտի հանդիսանար:

Մեր ձայնը միացուցած բովանդակ աշխարհի հայութեան ձայնին՝ Նո-
րին Սուրբ Օծութեանդ կը մաղթենք երկար, բեղուն եւ արեւչատ տարիներ,
որպէսզի Մայր Աթոռը շարունակէ իր պայծառ ու կենարար լոյսով ողողել
Ձեր հաւատաւոր հօտին հողիները, տակաւին բազում տարիներ:

Մատչելով ի համբոյր Ձեր Սուրբ Աջոյն, մնամք,

Որդիական ակնածանօք՝

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Նախագահ



ԳԵՐՇ. Տ. ԶԱԼԷՆ ԵՊՍ. ՉԻՆՉԻՆԵԱՆԻ


Ս. ԷԶՄԻԱԾԻՆ ԱՅՑԸ

(ՀՈԿՏԵՄԲԵՐ 1978)

Ն.Ս.Օ.Տ.Տ.Վազգէն Ա.Ամենայն Հայոց Կաթողիկոսի Գահակալութեան 23-րդ եւ Ծննդեան 70-րդ Տարեդարձներուն բարերաստիկ առիթներով Մայր Աթոռի մէջ տեղի ունեցան վեհաշուք հանդիսութիւններ եւ տօնակատարութիւններ, որոնց մասնակցեցան հայկական բոլոր գաղութներէն հոգեւորական թէ աշխարհական պատգամաւորներ:

Վերադարձին, Առաջնորդ Ս.Հայրը Եգիպտահայութիւնը հաղորդակից դարձուց իր հոգեպարար ապրումներուն՝ մշակութային սրահներու բեմերէն կատարելով շահեկան զեկոյցներ:

Գերշ. Տ. Զաւէն Ս.Եպս. Չինչինեան, մօտէն կը հետաքրքրուի գաղութիս հասարա-



Առաջնորդ Սրբազան Հայրը Ս.Էջմիածնի շրջափակին մէջ

Որպէս Եգիպտահայ գաղութի ներկայացուցիչ Ս. Էջմիածին ուղեւորուեցաւ նաեւ թեմիս Բարեկնամ Առաջնորդ Ս. Հայրը, Եգիպտահայութեան հաւատարմական ուխտը վերանորոգելու եւ շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւնները ներկայացնելու Վեհափառ Հայրապետին:

Կական եւ մշակութային կեանքով՝ ջերմօրէն բաջալերելով կազմակերպութեանց հայապահպանման համար տարած աշխատանքները: Սրբազան Հայրը խորապէս կը հաւատայ Հ.Բ.Ը.Մ.ի վսեմ առաքելութեան եւ բարձրօրէն կը գնահատէ անոր բերած նպաստը ազգապահպանման գործին:

ԳՈՐԾԵԼՈՒ

ԱՆՎՐԱԺԵԾՏՈՒԹԻՒՆԸ

Մեր առօրեային մէջ խօսքը եւ գործը երբեմն կ'ընթանան հակոտնեայ ուղղութեամբ: Հմայիչ խօսքին եւ անթերի գրութեան հետ, հետեւողական աշխատանքը՝ անբաժանելի անհրաժեշտութիւն է, կարենալ իրագործելու համար մեր գաղափարականը: Մեր Միութեան անուան մէջ իսկ շեշտուած է բարին գործելու անհրաժեշտութիւնը, որ ինքնին գեղեցկութիւն մըն է:

Ինչպէս իտե՞սկ կամ մըջնանոցի պարագային, այնպէս ալ մարդկային ընկերութեան մէջ, իւրաքանչիւր միաւորի աշխատանքը կրնայ յաջողցնել առաջադրութիւնները, հարթել դժուարութիւնները եւ ներդաշնակել ընդհանուր գնացքը: Այս պարագային, մեզմէ իւրաքանչիւրը եթէ իր կարողութեան չափով զբաղի Միութեան հարցերով, եթէ ջանայ նոր անդամ մը արձանագրել, սկսելով իր ընտանեկան պարագաներէն, այն ատեն մեր Միութիւնը իրապէս կ'ամրապնդուի: Թող չըսուի թէ որակն է որ կ'արժէ: Առանց ժխտելու որակին կարեւորութիւնը, չենք կրնար անտեսել քանակին ծանրութիւնը, անոր ուժին տարողութիւնը, անոր զօրութիւնը: Ինչո՞ւ ուրանալ բնագիտութեան ծանօթ օրէնքը, թէ քանակական յաւելումները որակական իտի՞ոտութիւն յառաջ կը բերեն, որ աւելի քան համոզիչ է:

Հ.Բ.Ը.Միութեան հանդէպ հայր վրատահութիւն կը տածէ: Իւրաքանչիւր կալուած կամ նուիրատուութիւն աւանդ մըն է անձեռնմխելի, որուն յանձանձուձու կ'ըլլայ գուրգուրանքով ու բծախնդրութեամբ: Նուիրումը, գոհողութիւնը եւ մանաւանդ կարգապահութիւնը եղած են մեր Միութեան մղիչ ուժերը եւ զինք դրած պատուաբեր պատուանդանի մը վրայ: Նկատի ունենալով Միութեան լայն գործունէութիւնը, մեր գաղթօժաններու տարբեր պայմանները, նոյնիսկ տուեալ գաղութի մը ընկերային, տնտեսական եւ դասակարգային տարբերութիւնները, դժուար է ներդաշնակել այս բոլորը: Այս իսկ պատճառով կը հաստատենք, թէ որքան շնորհապարտ ըլլանք մեր աննման բարերարներուն՝ իրենց պատկանելի կամ գոհացուցիչ նուիրատուութեանց, կտակներու եւ ֆոնտերու համար, այնքան եւ պարտական ենք այն համեստ, պարտաճանաչ եւ գիտակից ժողովականին, որ սիրայօժար կերպով յանձն կ'առնէ ամէն գոհողութիւն՝ անթերի կերպով կատարելու նուիրատուին կամքը կամ վերին մարմնին հրահանգը:

«Մարդն է որ գործէ գերկիր»: Անջրդի կամ բարեբեր հողը պիտի հերկուի, պիտի ցանուի եւ բերքը հնձուի, հաւաքուի եւ այս ազնիւ գործին մէջ անհատին կամքը կը նոյնանայ հաւաքաւուն կամքին հետ, իր աշխատանքը կ'ըլլայ նկատառելի նստատ, Միութեան զօրեղացման եւ անոր գաղափարին իրագործման:

Կաթիլներով է որ ջրվէժը կը կազմուի: Կաթիլները որքան ալ չնչին կարծուին՝ անոնք են սակայն որ ովկիանոսը կը կազմեն: Կաթիլները անոր ուժն են, անոր զօրութիւնը, ինչպէս օղակը շղթային, անոնք միասնաբար կը զօրանան, կ'ահագնանան:

Բայց ծահիծներու մէջ ալ կաթիլներ կան, աւաղ, եւ անոնց ուժը չէզոքացուած է եւ դատապարտուած են մահուան: Մեր մեծագոյն մտահոգութիւնը անշարժ անտարբերութիւնն է, որ համագոր է մահուան: Թօթափենք անտարբերութիւնը եւ գործենք իմաստութեամբ եւ հեռատեսութեամբ: Միութեան Ցկեանս նախագահ Պրն. Ալեք Մանուկեան կ'ըսէ. «Մեր կազմակերպութիւնը ունեցաւ իմաստութիւնն ու ճկունութիւնը սրահելու տրամաբանական կշիռը առօրեայ ստիպողականութեանց եւ վաղուան պահանջներուն մէջ. եւ թոյլ չտանք որ մասնաւորը վնասէ ընդհանրականին, եւ իտիպարձաբար»:

Ժիշդ կերպով գործելու համար նախ ծիշդ կերպով մտածելու է: Ըլլանք ողջմիտ, առարկայական, հետեւողական եւ կարգապահ. ասոնք անհրաժեշտ նախապայմաններն են շինարար աշխատանքի: Լաւ ծրագրուած աշխատանք մը կրնայ լաւ արդիւնք յառաջ բերել:

Յ. Համբիկեան

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ ՎՐԱՅ

Բանաստեղծութիւնը նախ զգացում մը, յետոյ գրական կտոր մը և գրական սեռ մըն է: Կեանքը նախ այն ուժն է որ էակը կ'ապրեցնէ, յետոյ այն ժամանակաշրջանը որ էակին ծնունդէն մինչև անոր մահը կը տևէ: Եւ ինչպէս բանաստեղծութիւններ կան առանց *բանաստեղծութեան*, այնպէս ալ կեանքներ կան՝ գրեթէ առանց *կեանքի*...

Բանաստեղծութիւն-զգացումը կեանք-ուժին մասն է, անոր ամէնէն հեռահաս, քափանցող և միևնոյն ատեն իրացնող, տիեզերական կեանքը քափանցող և իրացնող մասը:

* * *

Արուեստը այն *գործիքն* է առանց որու բանաստեղծութիւնը չի կրնար շինուիլ: Միանգամայն այն *նախանիւթն* է արուեստը՝ առանց որու չի կրնար *մարմնանալ* բանաստեղծութիւնը: Երևակայեցէ՛ք աղամանդը որ աղամանդով միայն կը յղկուի, աղամանդ որուն մէջ երկրի մութ ընդերքները իրենց ամենազինջ մաքրութիւնն են դրած՝ բանաստեղծութիւնը...: Արուեստ-գործիքը արուեստ-նախանիւթէն կազմուած է, և նախանիւթ արուեստը պէտք է գոյութիւն ունենայ մարդուն մէջ, հոն գոյութիւն ունեցող բանաստեղծութեան շուրջ՝ որպէսզի մարդը արուեստագէտ ըլլայ: Զուտ բանաստեղծութիւնը արտայայտելի չէ: Խօսքը, հոս, կը վերաբերի *բոլոր գեղարուեստները ոգիացնող* բանաստեղծութեան, կը վերաբերի *բոլոր գեղարուեստները մարմնացնող* արուեստին անշուշտ:

* * *

Արուեստն ալ, ուրեմն, բանաստեղծութեան և կեանքին նման, երկու է. արուեստ-նախանիւթ և արուեստ-գործիք: Կեանք-ուժը կեանք-տեղութիւնը կը ստեղծէ և, միևնոյն ատեն, բանաստեղծութիւն-զգացումը: Բանաստեղծութիւն-զգացումը կը ստեղծէ բանաստեղծութիւն-գրական սեռը, և ապահովաբար ինքն է նաև որ կը ստեղծէ արուեստ-նախանիւթը: Իսկ արուեստ-նախանիւթը, իր կարգին, արուեստ-գործիքը կը ստեղծէ, որմէ ալ կը սերին գեղարուեստները՝ — որոնց ամենին էական տարրերն են, հետեւաբար, կեանք, բանաստեղծութիւն, արուեստ:

Իսկ գեղեցկութիւնը: Ի՞նչ է իր էութիւնը: Տա՛րր է ան՝ թէ ստորագելիք: Բանաստեղծութեան՝ թէ արուեստի տարր կամ ստորագելիք: Ե՛րբ կը ծնի, ի՞նչպէս կը փանչուի: — Խոսվիչ հարցումներ, ամենքը, որոնց պատասխանել կը փորձէ հետևեալ նախնական օրինակը:

Մայր մը օրօրելով կը փնայնէ իր երախտն: Իր սէրը գայն կը տեսնէ մեծցած: Մեծցած և առողջ կը տեսնէ գայն, ինչ որ կեանքի փոխանցման, անոր տևականացման բնագոյն է իր մէջ և հասարակաց է ամէն մօր: Բայց, մայր կայ որ իր գաւազն ապագային մէջ կը տեսնէ բարութեամբ, փաշտութեամբ և տաղանդներով օժտուած, ամենքէն սիրուած ու յարգուած, և մայր ալ կայ որ գայն կը տեսնէ միայն հարուստ, հարուստ վանառական մը, սեղանաւոր մը կամ կալուածատէր մը դարձած, ճոխութեան մէջ ապրելու և ապրեցնելու համար զինք՝ իր մայրը: Արդ, բանաստեղծութիւն-զգացում է առաջին մօր սէրը, որովհետև գեղեցկութիւն կայ իր մէջ, մինչ երկրորդ մօր սէրը գուրկ է բանաստեղծութեան, որովհետև չի շողուրիք; չի պսպար գեղեցկութեամբ: Առաջին մօր սնուցած բանաստեղծութիւն-զգացումն է, որ գեղեցկութիւն կը դնէ իր գաւազն վրայ երգած օրօրին մէջ, գեղեցկութիւն որ կ'անցնի իր արուեստ-նախանիւթին մէջ, մինչ արուեստ-գործիքը ուէ միջամտութիւն չ'ըներ հոն: Ի փոխարէն, արուեստ-գործիքը պիտի չյաջողէր ուէ գեղեցկութիւն տալ երկրորդ մօր օրօրին:

Նորութիւն չէ, նոյնիսկ մաշած հնութիւն մըն է ըսել, թէ արուեստագէտները մայրեր են և իրենց գեղարուեստական գործերն՝ իրենց գաւազները: Դիտեցնող և օրօրող մայրեր, վերի մայրերէն մէկին կամ միւսին նման: Ոմանք բանաստեղծութիւն-զգացումով, ուրիշներ շահ-զգացումով տարուող մայրեր: Ոմանք, հետեւաբար, գեղեցկութիւն և ուրիշներ տգեղութիւն արտադրող, — խօսքը չընելով «չոր ստնտուններուն», որոնք նոյնպէս երգ կը ստեղծեն, կամ ստեղծել կը կարծեն...:


* * *

Ամէն աղուոր բանի խորը սէր է, բանաստեղծութիւն-սէր: Բնութիւնը աղուոր է. բնութիւնը սիրով՝ բանաստեղծութեամբ և արուեստով ստեղծուած է. բնութիւնը ստեղծող սէրը աստուածային սէր մըն է. ուրեմն Աստուած կայ, բանաստեղծ-արուեստագէտ Աստուած մը...:

Կառլոս Մեծեան

ԵՐԱԺՅՏԱԳԷՏ - ԴԱՇՆԱԿԱՅԱՐ ԺԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻԻ

ԶՈՅԳ ՆՈՒԱԳԱՅԱՆԴԵՍՆԵՐԸ



Հ.Բ.Ը. Միուսթեան Կեդրոնական Վարչական ժողովի տնօրինութեամբ, 1978 Հոկտեմբերին Եգիպտոս ժամանեց Ամերիկահայ տղանդաւոր Երաժշտագէտ-Դաշնակահար Շահան Արծրունի, երկու համերգ-դասախօսութիւններով հանրութեան ներկայացնելու « Հայ Դաշնամուրային Երաժշտութիւնը » :

Աղբսանդրիոյ թէ Գահիրէի նուազահանդէսները մեծ խանդավառութիւն ստեղծեցին հայ թէ օտար արուեստասէր հասարակութեան մօտ: Եւրջ երկու ժամ տեւող որակեալ յայտագիրը եւ անոր գործադրութեան ինքնուրոյն ձեւը՝ մեծապէս գնահատուեցան ունկնդիրներէն:

Ստորեւ կուտանք Շահան Արծրունիի գոյգ համերգներուն նկարագրականները:

Խմբ.

ԳԱՀԻՐԷ

ԶԱՅՆԱՅԻՆ ԱՆՄԱՀ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻԻ

ՆՈՒԱԳԱՅԱՆԴԵՍԻՆ ԱՌԻԹՈՎ

Դաշնամուրային արուեստին տիրացած ամերիկահայ երաժշտագէտ եւ դաշնակահար Շահան Արծրունի Գահիրէ քաղաքի հայութեան տուած նուազահանդէս մը, 29 Հոկտեմբեր 1978-ի երեկոյեան, Պըլըթանեան Սրահին մէջ, Հովանաւորութեամբ Թեմիս Առաջնորդ Գերշ. Տ. Զաւէն Ս. Եպս. Չինչինեանի, նախագահութեամբ Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Յանձնաժողովի ատենապետ Տէր եւ Տիկին Յովհաննէս Բէհեանի: Հայ դաշնամուրային երաժշտութեան նուիրուած այս մենանուազն ու ելոյթը կազմակերպուած էր Հ.Բ.Ը.Մ.ի Գահիրէի Մասնաժողովին կողմէ: Երաժշտագէտ-դաշնակահարը հանրութեան ներկայացուց Պրն. Նորայր Տէօվլէթեան:

Երաժշտութիւնը եւս եղած է ու կը մնայ մարդուն համար միջոց մը՝ բացայայտելու իր հոգեկան աշխարհը, եւ արտայայտելու իր ապրելու կերպը՝ քննութեան, սիրոյ ու մահւան խորհուրդներուն հանդէպ:

Մեր ժողովուրդն ալ, իր երկրի տարածքին վրայ, հաղորդուելով քննութեան ու տիեզերքին հետ, ստեղծած է իր հոգեկան ուրախութիւններուն, տխրութիւններուն, իղձերուն ու կրօնական պաշտամունքներուն արտայայտութիւնը Եղող ինքնատիպ երաժշտութիւն մը: Ան անշիտութիւններէն ազգային է, հայկական:

Շահան Արծրունի ներկայացուց ու մեկնաբանեց շուրջ 15 հայ երաժիշտներու այլազան գործեր, հայ երաժշտութեան Մեսրոպէն՝ Կոմիտաս, մինչեւ հայ երաժշտութեան ինտրան՝ Ալան Յովհաննէս: Անգամ մը եւս հաղորդուեցանք Կոմիտասի, Խաչատրեանի, Ալան Յովհաննէսի, Ալիսիա Թերզեանի, Լորիս Ճգնաւորեանի, Բաբաջանեանի, Յարութիւնեանի եւ այլոց ստեղծագործութիւններուն: Դաշնակահարը գեղագէտի ճաշակով մեղեդիին նկարագրական շեշտ մը կուտար՝ նուրբի եւ ուժովի տարբերակումներով, օրինակ՝ Ալան Յովհաննէսի « Կախարդական Սրինգս » եւ Արամ Խաչատրեանի « Պոէմ »: Իր նուազելու կերպը ունէր նկարագիր՝ տեղ-տեղ զգայուն, ինչպէս Գոհարիկ Ղազարոսեանի « Նագպար »-ը, տեղ-տեղ տիրական, ինչպէս Ալիսիա Թերզեանի վաղ տարիքին յօրինած « Թոքաթա », ըստ անհրաժեշտութեան:

Վարդապետը, այս գերզգայուն « ծպոտ »-ը, տարբադադրած է, գտած ու գտած է մեր ժպիտն ու լացը՝ ստեղծելով ձայնային անմահ քանաստեղծութիւններ: Ու Կոմիտասեան այս ոգին էր, որ իրարու կը կապէր Շահան Արծրունիի մեկնաբանած երաժիշտներուն գործերը:

Ու հաւանաբար այս է հիմնական պատճառը:



Հ.Բ.Ը.Մ.ի Գահիրէի Մասնաժողովի անդամները արուեստագէտ Շահան Արծրունիի հետ

որ, որ Հ.Բ.Ը. Միուլթիւնը շրջագայութեան
 Գանած է երիտասարդ, տաղանդաւոր-դաշնակա-
 Կար-երաժշտագէտը, որ գաղուլէ գաղուլ
 անգամ մը եւս հնչեցնէ Կայ ոգիի վերածնու-
 Թեան սատարող՝ Կայ երաժշտութիւնը: Բախ-
 տաւոր Արծրունի:

Յառաջացած գիշերին՝ մեր մէջ կը
 շարունակեն հնչել Ալան Յովհաննէսի
 «Միջգիշերային Զանգեր»ը:

ՍԻՐՎԱՐԴ ԲԷՕՒԷՆԱՆ


ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ - ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

Աղեքսանդրիոյ Հ.Բ.Ը.Մ.ի Մասնաճիւղի
 Վարչութիւնը, համագործակցութեամբ Բագ-
 մարուեստից Թանգարանի Տեսչութեան, երա-
 ժրշտական երեկոյ մը կազմակերպած էր իր
 սրահին մէջ, Հինգշաբթի, 26 Հոկտ. 1978,
 Կ.Ե. ժամը ճիշդ 7ին:

Օրուան քանախօսն ու նուագահարն էր
 Ամերիկահայ ծանօթ երգահան Պր. Շահան
 Արծրունի, որուն անձն ու գործը ներկայ
 Կայ թէ օտար ունկնդիրներուն ներկա-
 Եացուեցաւ Պր. Ժորժ Մրապեանի կողմէ՝
 արաբերէնով եւ Օր. Անի Տիշչէքէնեանի
 կողմէ՝ անգլերէնով: Ապա յարգելի արուես-
 տագէտը իր ելոյթը ունեցաւ, առիթներով
 ներկայ հասարակութիւնը:

Այս հանդէսին նպատակն էր Կայ երա-



Հ.Բ.Ը.Մ.ի Աղեքսանդրիոյ Մասնաճիւղի
 անդամները եւ Գերպ.Տ. Ի. Ծ.Վրդ. Ղազարեան
 արուեստագէտ Շահան Արծրունիի հետ

ժրշտագէտներ եւ անոնց գործերը ծանօթացնել
 օտարներուն: Աւելի քան 14 Կայ հեղինակներ
 ու իրենց գործերը ներկայացուեցան անգլե-
 րէն լեզուով, դիրաւասի եւ ըմբռնելի ոճով
 մը, ինչ որ ցոյց տուաւ քանախօսին արժա-
 նիքները, մանաւանդ օտար հասարակութեան:

Հանդէսին աւարտին, Տիգրան - Երկաթ,
 Մշակ. Միութեան կողմէ, ի պատիւ արուես-
 տագէտին տրուեցաւ ընդունելութիւն մը,
 որուն ընթացքին խօսք առին Հոգ. Տ. Իսա-

ՀԱՒԱՍՏՈՒՄՆԵՐ

Կարգապահութիւնը տեսակարար ուժն է
 որեւէ կազմակերպութեան: Առանց անոր ոչ
 մէկ շինարար գործ յառաջ կը տարուի: Կար-
 գապահութեան մէկ երեսն է Ճշգրտապահութիւնը:
 Ճշգրտապահութիւնը ոչ միայն անհատին, այլ իւր
 ընկերութեան մը մակարդակին ցուցանիշն է:
 Ճշգրտապահութիւնը այն բժանիչընթացքն է,
 որով ուրիշներու ինչպիսի կ'ըլլանք սոսիալմի
 տանջանքը եւ անորոշութեան տհաճութիւնը:

Ճշգրտապահ անհատը յարգած կ'ըլլայ նախ
 ինքզինքը եւ ապա ուրիշները:

Քիչ խօսիլը շատ մտածելու արդիւնք է:
 Շատ խօսիլը քիչ ժամանակ կը թողու մտածելու:

Որեւէ լուծում առաջադրելու համար
 հարցը իր ամբողջութեան մէջ պէտք է տեսնել:
 մասնաւոր լուծումը կը նմանի կիսատ մնացած
 շէնքի մը կամ ծուռ բուսած ծառի մը:

Անհրաժեշտ է հետեւողականութիւնը
 ժողովականութեան մէջ: Ինչու ժխտել քան մը,
 որ արդէն նախապէս հաստատած էինք: Որոշում
 մը, սխալ կամ ճիշդ, կ'առնուի եւ կը գոր-
 ծադրուի անյապաղ: Գործելու դանդաղութիւնը
 կրնայ վնասել նոյնիսկ ճիշդ որոշումի մը
 գործադրութեան:

Կարծիք մը յայտնելէ առաջ ուրիշներու
 կարծիքը լսել՝ կը նշանակէ վեհանձն ըլլալ:
 Իր կարծիքին վրայ պնդելը յանձնապատաս
 ըլլալ կը նշանակէ:

Հաւաքականութեան մէջ անհատական
 նկատումները, նախախորութիւնները եւ յամա-
 տութիւնը անհաճոյ մթնոլորտ կը ստեղծեն:
 Իրարու հանդէպ յարգանքի պակասը, խժքժանքը
 երբեմն պատճառ կ'ըլլան շեղումներու,
 անվերջ վէճերու, որոնք ամլութեան կը
 մատնեն գործադիր մարմինները:

Որքան կարճ ըլլայ մէկու մը խօսքը՝
 այնքան հաճելի կ'ըլլայ: Երբ նորութիւն
 մը պիտի չըսուի նախընտրելի է չխօսիլ:

Յ. ՀԱՄԱԿԵՆԱՆ

Կակ Ծ. Վրդ., ՊՊ. Գէորգ Փիլիկեան, Տոբթ.
 Կարօ Անսուրեան, Վրէժ Սէֆէրեան, Մուրատ
 Քէօշկէրեան, ծանօթ խմբավար Արա Խաչա-
 տուրեան եւ ի վերջոյ օրուան պատուոյ
 հիւրը՝ Պր. Շահան Արծրունին:

Յաջորդ առաւօտ, Ուրբաթ, 27 Հոկտ.
 1978, Պր. Արծրունի ընկերակցութեամբ
 Հ.Բ.Ը.Մ.ի Վարչութեան եւ Երիտասարդաց
 Յանձնախումբի անդամներուն այցելեց Ազգ.
 Առաջնորդարան, Ս. Պօղոս-Պետրոս Եկեղեցին,
 Պօղոսեան Վարժարանը եւ Եղեռնի Յուշարձանը:

Բարի ծանապարհ իրեն, կրկին զինքը
 ունկնդրելու եւ վայելելու յոյսով:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ 100.000 ՏՈԼԱՐԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՓՈՒԹԱՑՈՒՑ ԱՂԵՏԵԱԼ ԼԻԲԱՆԱՆԱՅԱՑՈՒԹԵԱՆ

Շուրջ միամեայ յարաբերական խաղաղութենէ ետք, այս տարուան Յուլիսին վերսկսան Լիբանանի քաղաքացիական կռիւները, որոնք սաստկացան Սեպտեմբեր 28ին, երկիրը մատնելով քաոսի: Լիբանանահայութիւնը տուաւ մարդկային զոհեր եւ կրեց նիւթական ծանր կորուստներ, որովհետեւ այս անգամ բազմահազար ռումբերու եւ հրթիռներու թիրախ դարձան հայաբնակ քաղերը՝ հալիլ Պետեիլ, Հանըն, Պուրն Համուտ, Էշրէֆիէ Սիլ Էլ Ֆիլ, Անթիլիաս եւ Տրայպայա:

Կռիւներուն վերսկսումէն ի վեր ցարդ վտանգէ գերծ մնաց Պէյրութի արեւմտեան շրջանի բնակչութիւնը, որ սակայն ունեցաւ ջուրի եւ էլեկտրականութեան տագնապ:

Հ. Բ. Ը. Միութեան Կեդրոնական վարչական Ժողովը, ընդառաջելով Միութեան Լիբանանի Շրջանակային Ցանձնաժողովի ստիպողական կոչին, Սեպտեմբեր եւ Հոկտեմբեր ամիսներուն Պէյրութ փութացուց 100,000 տոլար, որուն շնորհիւ կարելի եղաւ հոգալ բնակչութեան, սնունդի եւ առողջապահական անմիջական կարիքները տնտեսան եւ իրենց ինչքերը կորսնցուցած բազմահարիւր հայ ընտանիքներու:

Լիբանանի Շրջանակային Ցանձնաժողովը կեանքի կոչեց Կարօտեալներու Օժանդակութեան Կեդրոնական Մարմինը յարակից յանձնախումբերով՝ առողջապահական, յարաբերական, սնունդի ապահովման, տեղաւորման, կարգապահական եւ առողջապահական, որոնք, կազմուած Միութեան անձնուէր անդամներէն, հոգացին առօրեայ կարիքները արեւելեան Պէյրութի ուրակողծուած հայաբնակ քաղերէն փախած եւ Ա. Մանուկեան Կեդրոն ապաստանած ընտանիքներուն, եւ դրամական օգնութիւն հասցուցին արեւելեան Պէյրութի աղէտահար հայութեան:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, որ Լիբանանի քաղաքացիական կռիւներուն ամբողջ տեսողութեան, 1975էն ցայսօր աղէտեալ հայութեան եւ անոր ազգային կեանքի վերականգնումին օժանդակեց աւելի քան մէկ միլիոն տոլարով, կանգնած կը մնայ Լիբանանի հայ գաղութին կողմէն:

Ճգնաժամային այս օրերուն համայն հայութեան սեպուի պարտականութիւնն է կարելի բոլոր միջոցներով ամոքել լիբանանահայութեան ահաւոր տառապանքն ու սատարել անոր վերականգնումին:

ԳԻՒԱՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Նիւ Եոթ, Ն. Ե., Նոյեմբեր 17, 1978



Պիրֆայայի Ապրիլեան Յուշարձանը
վնասուած քայք կանգուն:

Ռմբակոծումներէն աւերուած
հայկական շէնք մը:



Աղիտահար հայ մամիկ մը:



Հ Ա Յ Լ Ե Ջ Ո Ւ

Շնորհակա՛լ եմ, լեզո՛ւս, որ բերանիս մէջ մանկուց
Ամբան պաղուկ տանձի՛ պէս քե՛զ դրեց բախտը բաշխիչ .
Շնորհակա՛լ եմ, լեզո՛ւս, որ քեզնով եմ կուց առ կուց
Ուսուցիչներըս ծերուկ մատուցել խինդ ու Քախիծ :

Շնորհակա՛լ եմ ամեն վանկիդ համար ու յանգիդ ,
Խրաքանցիւր հնչիւնիդ ու թրթռումի՛դ իսկ համար ,
Ուր կայ բազում աննացած ձեռքերի դողն անհանգիստ ,
Երբ տուփի պէս շնորհի մեկնում էին մեն մի բառ :

Շնորհակա՛լ եմ ամեն զբփից զրիչ նուաստի ,
Որ քեզ բերեց ու քեզնով՝ մրրիկի համ, ադի խանձ ,
Լնչպէս շիշն այն ամբաստակ , ուր արկածեալ նուաստին
Իր կտակն է խցանում, յանձնում ծովին ու մարդկանց :

Շնորհակա՛լ եմ, լեզո՛ւս, բոլոր, բոլո՛ր նրանցից ,
Ով մի բերան սիւք փչեց կաղամախիդ գեղուղէշ ,
Ով մի ընձիւղ խնամեց, ով նեցուկեց գէթ մի ցից ,
Ով ուխտ կապեց, հովաքաւ ու օրհնանքն իր քեզ ուղղեց :

Շնորհակա՛լ եմ, լեզո՛ւս... վրադ փչած մէն մի սիւք
Փռշեհատերն է վանել իմ ապագայ սաղարթի ,
Իմ հանքի մէջ է հնչել բահի ամէն սկրքուք ,
Եւ ծնունդի՛ս սատարել ամէն օրհնանք ու գարթիք :

Գու փայլել ես, որ ես ի՛նձ խորաչափեմ անկույն ,
Զ՛անտեսելով յատակիս Քափանցիկ խինը անգամ ,
Գու հնձել ես, ամբարել . լցրել մարագ ու նկուղ ,
Որ ես օտար խոզանի հասկափաղին չմնամ :

Ու այնքան լայն ես կտրել, կարել, սփռել ծիրանիդ ,
Որ նեղ, վտիտ ուսերից եղեմօրէն սահելով ,
Ցուցադրում եմ արեւին մերկութիւններ իրանի .
Որ ծածկըւում եմ շտապ թգեմու նուրբ տերեւով :

Արա այնպէս, հա՛յ լեզու, որ կակաչի արտի պէս
Քե՛զ զգենայ ամէն հայ կիրակնօրէն վայելուչ ,
Արա այնպէս, որ ես էլ մինչեւ վերջին, հուսկ բապէս
Գէթ ֆղանցքդ ունենամ աչքիս, շուրթի՛ն տանելու :

ԱՐԱՀԱՄ ԱԼԻՔԵԱՆ

ԱՌԱՋԱՐԿ ՆՇԵԼՈՒ ՏԻԱՐ Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱԿԸ

Նախագահ Ալեք Մանուկեան իր բացման ծառուկ կ'անդրադառնայ անցնող 25 տարիներու իր նախագահութեան շրջանին, իր ստանձնած պաշտօնին ծանր պատասխանատուութեանց, յիշեցնելով, որ ծամբայ ելեր էր յանձնառութեամբ մը. - « ծառայել ազգին Հ.Բ.Ը.Մ.ի միջոցաւ: Ապա շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց որոնք անցնող 25 տարիներու ընթացքին իրենց նուիրումով եւ գործակցութեամբ թիկունք կանգնեցան իրեն: »

Նախագահը կ'անդրադառնայ 1977-ի արդիւնքներուն ու պայագայի ծրագիրներուն: « 1977-ը մրցանիշ հաստատող տարի մը եղած է Միութեան գործունէութեան բոլոր մարզերուն մէջ: Ան կը յայտնէ թէ այնքան

մէ 2-3ը օժտէ նոր շէնքերով: - Պիտի շարունակէ համալսարանական կրթաթոշակ յատկացնել արժանաւորներուն, անոնց թիւը 376-էն բարձրացնելով 500-ի: - Բաց պիտի պահէ մշակութային-մարզական իր բազմաթիւ կեդրոնները: - Պիտի աշխատի Մ.Ն.ու հայաշատ քաղաքներուն մէջ ալ նման 3-4 կեդրոններ քանալ: - Պիտի կրկնապատկէ երիտասարդական, մշակութային եւ ինամատարական ձեռնարկներու համար եղած յատկացումները: Նախագահը իր ծառուկ կ'աւարտէ անդրադառնալով Լիբանանահայութեան աղետալի կացութեան եւ կը վստահեցնէ թէ Միութիւնը միշտ պատրաստ է օգնութեան փութալ... » :



Հ.Բ.Ը.Մ.ի տարեկան Ընդհանուր ժողովէն տեսարան մը: Զախէն աջ պպ. Ե.Մալեան, Յկեանս նախագահ Ա.Մանուկեան, Մ.Հայկենց, Բ.Գարթալեան, Ս.Ֆէսճեան եւ Ռ.Կրէկրրի:

ատեն որ Միութիւնը ծանր աշխատանք կը տանի յօգուտ հայութեան, բժախնդրօրէն կը մատակարարէ իրեն վստահուած գումարները եւ կը վայելէ ժողովրդական վստահութիւն, Միութեան հիմնադրամները պիտի շարունակեն աճիլ՝ այնպէս ինչպէս անցնող 25 տարիներուն անոնք 8 միլիոն տուարէն բարձրացան 45 միլիոն տուարի: - Յառաջիկայ տասնամեակին Միութիւնը շատ հաւանաբար պիտի պահէ իր 21 դպրոցները, բնայ 2-3 նոր դպրոցներ, եւ անոնց-

վիճակագրական ծանօթութիւններ
- Միութիւնը 1977-ին ունէր 149 մասնա-
ծիւղ եւ 17992 անդամ:
- 1976-77 ուսումնական տարեշրջանին
Միութիւնը պահեց իր 21 վարժարանները
6060 աշակերտներով եւ 445 մտայուն ու
այցելու ուսուցիչներով:
- Ազգապահպանման նպատակներու համար
1977-ին ծախսած է 3,561.000 տուար:

Հ. Բ. Ը. Մ. ի կեանքի մասին

Հ. Բ. Ը. Մ. ի ԵԳԻՊՏՈՍԻ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՆԻՍՏ - 9 ՅՈՒՆԻՍ 1978

Հ. Բ. Ը. Մ. ի Եգիպտոսի Կեդրոնական Յանձնաժողովի հրաւերով, 9 Յունիս 1978-ին, խորհրդակցական խառն նիստ մը գումարուեցաւ Հելիոպոլսոյ Հ. Մ. Ը. Մ. - նուպարի հաւաքովայրին մէջ: Այս նիստին ներկայ էին Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ Բարեգործականի Մասնաճիւղերու վարչութեանց անդամները:

Նիստը ընթացաւ մտերմիկ մթնոլորտի մէջ: Զննարկուեցան գոյգ մասնաճիւղերու վարչութեանց մտահոգութիւններն ու փափաքները: Եղան զաղափարներու սրտքաց իոխանակումներ, թելադրութիւններ, մշակուեցան ծրագիրներ՝ հետագայ ընդհանուր գործունէութեան եւ ի մասնաւորի՝ Հ. Բ. Ը. Մ. ի երիտասարդական մարմիններու մշակութային եւ դաստիարակչական շարժման աշխուժացումին համար: Խմբ.

ԳԱՀԻՐԷ

Օգտուելով Հ. Բ. Ը. Մ. ի Զուլիցերիական հրաւիրած կողմ Ընկ. Պատուակալ Վարիչ - Պատուիրակ՝ Տիար Արա Չամբէրթէնի եւ Միութեան Եւրոպայի հրաւական-Խորհրդական՝ Մեթր Շաւարշ Սելյօնքեանի քաղաքս ներկայութենէն, Գահիրէի Հ. Բ. Ը. Մ. ի վարչութիւնը գեղեցիկ զաղափար ունեցեր էր կազմակերպելու իոխ-ծանօթագման հանդիպում մը, Հելիոպոլսոյ Հ. Մ. Ը. Մ. - նուպարի հաւաքովայրին մէջ, 20 Ապրիլ 1978-ի երեկոյեան: Ներկայ էին Հ. Բ. Ը. Մ. ի Եգիպտոսի Կեդրոնական Յանձնաժողովի, Հ. Մ. Ը. Մ. - նուպարի վարչութեան եւ Միութեանս Երիտասարդաց Յանձնախումբի անդամները: Ներկայ էր նաեւ թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Զաւէն Ս. Եպս. Զինչինեան:

Վարչութեան Ատենապետ՝ Պրն. Յ. Էքսէր-ժեանի ողջոյնի խօսքերէն ետք, Երիտասարդներուն իրենց պնտգամը տուին Տիար Ա. Չամբէրթէն եւ Մեթր Շ. Սելյօնքեան, իսկ Սրբազան Հայրը դրուտեց Բարեգործականի ազգօգուտ գործունէութիւնը սփիւղքահայ իրականութեան մէջ: Այնուհետեւ Օր. Ա. Պետրոսեան կարդաց «Միոյ Պատգամ» խորագրուած իր մէկ ինքնագիր ոտանաւորը, ձօնուած՝ երիտասարդներուն:

Տեղի ունեցաւ նաեւ պատշաճ հիւրասիրութիւն:

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ

Աղեքսանդրիոյ Հ. Բ. Ը. Մ. ի նորրնտիր վարչութիւնը, 5 Մայիս 1978-ին, իր կեդրոնատեղիին մէջ կազմակերպած էր անդամահամակրական թէյասեղան մը: Ներկայ էին Աղեքսանդրիոյ Առաջնորդական Իոխանորդ՝ Գերպ. Տ. Իսահակ Ժ. Վրդ. Դազարեան, Հայ Կաթողիկէ Առաջնորդական Իոխանորդ՝ Գերպ. Յովսէփ Ժ. Վրդ. Պասամեան, Զաղաքական Ժողովի Ատենապետ եւ Մասնաճիւղի Պատուոյ Նախագահ՝ Տիար Վ. Ալեքսանեան, Հայ Աւետարանական Համայնքի վարչութեան Ատենապետ՝ Տիար Վ.

Խունկանեան, ազգային երեսփոխաններ եւ միութեանց վարչականներ:

Ընդունելութեան բացումը կատարեց վարչութեան Ատենապետ Պրն. Մինաս Պանտայեան եւ ապա հրաւիրեց վարչութեան Ատենապետ Տորթ. Կարօ Անսուրեանը իր խօսքը ընելու:

Յարգելի Ատենապետը նախ ինդրեց ներկաներէն մէկ վայրկեան յոտնկայս յարգել յիշատակները նորոգ վախճանեալ Ապատեան Սրբազանի եւ Արամ Խաչատրեանի, որմէ ետք ան ներկայացուց վարչութեան ապագայ գործունէութեան ծրագիրը:

Տեղի ունեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին զաղութին սիրուած արուեստագէտները՝ արտասանութեամբ եւ երգով: Ելոյթներ ունեցան նաեւ Տիար Վ. Ալեքսանեան եւ Առաջնորդական Փոխանորդ Գերպ. Տ. Իսահակ Ժ. Վրդ. Դազարեան:

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ

Հ. Բ. Ը. Մ. ի Աղեքսանդրիոյ վարչութեան տարեկան Թէյասեղան-Ընդունելութիւնը, ի պատիւ հին եւ նորագիր անդամներու, տեղի ունեցաւ Կիրակի, 3 Դեկտ. 1978-ին: Հաւաքոյթին ներկայ էին նաեւ Առաջնորդական Փոխանորդ՝ Գերպ. Տ. Իսահակ Ժ. Վրդ. Դազարեան եւ հանգամանաւոր հիւրեր:

Թէյի սպասարկութենէն յետոյ, վարչութեան Գանձապահ եւ օրուան հանդիսավար Պրն. Ն. Գարթալեան կատարեց բացման խօսքը եւ կարդաց գրութիւն մը, որով նորագիրները կը յայտնէին իրենց հաւատարմութիւնը Միութեան զաղափարականին հանդէպ:

Նորագիրները ներկայացնելէ ետք, յաջորդաբար խօսք առնելու հրաւիրուեցան վարչութեան Ատենապետ Տորթ. Կ. Անսուրեան, Ազգային Երեսփոխան՝ Տիար Վ. Թօսունեան, Միութեան Պատուոյ Նախագահ՝ Տիար Վ. Ալեքսանեան, «Տիարան Երկաթ» Հ. Մ. Մ. վարչութեան Ատենապետ՝ Տիար Գ. Փիլիկեան, Հայ Աւետարանական Եկեղեցւոյ վարչութեան Ատենապետ՝ Տիար Է. Կանիմեան եւ Գերպ. Տ. Իսահակ Ժ. Վրդ. Դազարեան, որոնք դրուատեցին անցնող տարուան ընթացքին վարչութեան կատարած ազգաշէն գործունէութիւնը:

Գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին ծանօթ արուեստասէրներ՝ Տիար Դ. Պէզիրժեան եւ Տիկ. Վ. Յաբէթեան՝ «Եղբայր Ենք Մենք» բերթուածին արտասանութեամբ եւ երգեցողութեամբ:

Ներկայ անդամ-անդամուհիները, առ ի գնահատանք վարչութեան տարած ազգօգուտ աշխատանքին, ըրին սրտաբուխ նուիրատուութիւններ:

Հ. Մ. Ը. Մ. - ՆՈՒՊԱՐԻ կեանքէն

ԱԿՆԱՐԿ՝ ՀԵԼԻՈՊՈԼՍՈՅ Հ.Մ.Ը.Մ.-ՆՈՒՊԱՐԻ
1978-ի ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

- Նորընտիր Վարչութեան անդրանիկ ձեռնարկը եղաւ Մայիս 1-ի «Շամ էլ Նեսիմի» կամ «Գարնանամուտի Օր»-ու անհրաժեշտ սոնակատարութիւնը: Հոծ թիւով ընտանիքներ, առաւօտեան ժամերէն, խուռներամ փութացած էին Հ.Մ.Ը.Մ.ի օդաստուն դաշտը, ընկերական ջերմ մթնոլորտի մէջ ճամբարի օր մը անցընելու համար: Վարչութիւնը ջանք չէր խնայած ստեղծելու երէցներուն թէ՛ երիտասարդներուն յարմար ժամանցներ՝ որոնք արժանացան բոլորին գնահատութեան:

- Երկրորդ ձեռնարկը, ամառնային եղանակի բացման առթիւ, տեղի ունեցաւ 10 Յունիսին «Օփրն Պիւֆէ»ի ձեռնարկով, ուր ի յայտ կուգար Տիկնանց Օժանդակ Յանձնախումբին՝ համադամներու պատրաստութեան ճարտարութիւնը:

- Վերոյիշեալ հաստիքներ զոյգ ձեռնարկներէն ետք, որպէս մարզական գործունէութիւն, պարէթպոլի խումբը, 30 Յունիսին, մրցեցաւ Հելիոպոլսոյ Սփորթինկի դէմ, ապա մասնակցեցաւ Աղբըսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-նուպարի կազմակերպած համահայկական պարէթպոլի մրցաշարին եւ 23 Յունիսի ակադեմիական մրցումին: Հելիոպոլսոյ Հ.Մ.Ը.Մ.-նուպարը յաղթական հանդիսանալով՝ տիրացաւ սոյն մրցաշարի բաժակին:

- Օգոստոսին, առաջին անգամ ըլլալով, տեղի ունեցաւ ծիւտոյի խաղերու ներկայացում մը:

- Հոկտեմբեր 6-ի «Յաղթանակի Տօն»-ին եւ Հ.Մ.Ը.Մ.ի 60-ամեակին առիթներով, կազմակերպուեցաւ եռօրեայ պարէթպոլի համահայկական մրցաշար մը: Շաբաթ եւ Կիրակի օրերու մրցումները ակադեմիական պարանցիկ երեկոյթով եւ ընտանեկան հաւաքով թուով:

- Կիրակի, 12 նոյեմբերին, «Գուրպան Պայրամ»ի եւ «Ձմեռնային եղանակի Բացման»

առիթով, տեղի ունեցաւ «Անուշեղէններու Պագար» եւ պարէթպոլի մրցում՝ ընդդէմ Հելիոլիտոյի, մասնակցութեամբ 16 տարեկանէն վար տղոց:

- 1978-ը տարին փակուեցաւ 31 Դեկտեմբերին կայացած Կաղանդի Աւանդական Տօնակատարութեամբ, շէնշող մթնոլորտի մէջ:

Հ.Մ.Ը.Մ.-ՆՈՒՊԱՐ - ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

1978-ի ընթացքին Միութիւնը ունեցաւ աշխոյժ գործունէութիւն: Յաջորդաբար կազմակերպուեցան գնահատման մրցաշարեր՝ հայկական խումբերու, ինչպէս նաեւ օտար խումբերու դէմ, հետեւեալ մարզական խաղերուն մէջ. պարէթպոլ (կրտսերներ եւ երիտասարդներ), մինիպարէթ, փինկ-փոնկ, թենիս, ճատրակ:

Մարտ 1978-ին տեղի ունեցած պարէթպոլի բառանկիւն մրցաշարին (16 տարեկանէն վար տղոց խումբերուն միջեւ, մասնակցութեամբ Y.M.C.A.-ի, Սէն Մարթի եւ Իթի-հատի) Հ.Մ.Ը.Մ.-նուպարի խումբը փայլուն յաղթանակ մը տարաւ 37/29 արդիւնքով:

Յիշատակութեան արժանի ձեռնարկներէն նշենք նաեւ Միութեան 60-ամեակին առթիւ Յունիսի մէջ կազմակերպուած եռօրեայ պարէթպոլի համահայկական իտալացի պարէթպոլի մրցաշարին մարզական բոլորակներուն, Տարեւան Շրեղ Պարահանդէսը, «Մարզական Օր»-ը, Պայրամի եւ Կաղանդի Տօնակատարութիւնները:

Սկաուտական եւ Կայտական բաժինն ալ իր կարգին ունեցաւ եռանդուն գործունէութիւն: Կազմակերպուեցան՝ գնաձարչաւ, հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան մրցում, ընդհանուր զարգացման երեկոյ, ամլեթիզմի մասին դասախօսութիւն, ամլեթիք մրցումներ եւ ողիմպիական խաղեր (փոքրերու), խորուկահանդէս եւ Տարեկան Մեծ Քերմէս՝ Սկաուտական եւ Կայտական Շարժման 45 - ամեակին առթիւ:



Հելիոպոլսոյ Հ.Մ.Ը.Մ. նուպարի պարէթպոլի Ա. խումբը

Հ. Բ. Ը. Մ. Ի ՄՈՆԹՐԵԱԼԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ

ՀԱՒԱՔԱՏԵՂԻՒՆ ԲԱՑՈՒՍԸ

Շաբաթ, 3 Յունիս 1978, երեկոյան ժամը 6:30ին տեղի ունեցաւ արիւնքու եւ արեւնուշերու հաւաքատեղիին բացման հանդիսութիւնը, Մոնթրէալի Հ. Բ. Ը. Միութեան Մասնաճիւղի Ալեք Մանուկեան Կեդրոնին մէջ, հրաւիրեալներու եւ հոծ բազմութեան մը ներկայութեան:

Խմբապետ Միհրան Մընըշեան հանդէսը բանալով, շնորհակալութիւն յայտնեց օրուան նախագահ Պարէտ Էրզ. Երէցեանին, հանդիսութեան կնքահայր Յ. Քեթիթեանին, մըշակութային միութիւններուն, Հ. Մ. Ը. Միութեան - Կամբի Սկաուտական վարչութեան, Գանատայի Սկաուտ. գործաւար Պր. Փուլթըրի, բարձրաստիճան պաշտօնատարներուն եւ ներկաներուն: Իր երախտագիտական դժուարութիւնները յայտնեց նաեւ Հ. Բ. Ը. Միութեան Յիւսէն Նախագահ Ալեք Մանուկեանին եւ տեղւոյս վարչութեան, որոնց քաջալերանքով եւ աջակցութեամբ է որ սկաուտական այս շարժումը սկիզբ առեր եւ զարգացեր էր Մոնթրէալի մէջ:

Յայտագրին առաջին մասը սկսաւ արիւնքու եւ գայլիկներու բաժնի փոխ խմբապետներու երգման արարողութեամբ: Սկաուտական օրէնքին հնադանդելու եւ հայ ազգին ծառայելու իրենց երգումը կատարեցին ըսկաուտներ Գէորդ Մեթերիսեան, Ռաֆֆի Մենեսեան, Արէն Ֆեներճեան եւ Վահան Գասպեան:

Երգման արարողութենէն ետք, Հայր Սուրբին ընծայուեցաւ սկաուտական վզնոց մը, որպէս խումբին հոգեւոր հովիւը:

Յետոյ Գանատայի Սկաուտական վերին մարմնի կողմէ պիեներ եւ վկայադիրներ յանձնուեցան Պր. Գէորդ Պարոնեանի, Կարպիս Աբրահանի, Վարուժան Մարկոսեանի եւ Միհրան Մընըշեանի, որոնք որպէս խմբապետներ տարիներով ծառայել էին մեծ նուիրումով:

Հ. Բ. Ը. Միութեան Մոնթրէալի Մասնաճիւղի ատենապետ Պր. Միլտիէ Մալխասեան խօսեցաւ սկաուտական շարժումին ֆիզիքական, բարոյական եւ դաստիարակչական, ինչպէս նաեւ ազգային դերին մասին՝ նոր սերունդի կազմաւորման համար:

Հանդէսին երկրորդ մասով հրամցուեցաւ պեղարուեստական կոկիկ յայտագիր մը: Գայ-

լիկներ, արծուիկներ, արիւնք եւ արեւունքներ խարոյկին շուրջը բոլորուած՝ ներկայացան երգերով, պարերով, արտասանութիւններով, զուարճալի խաղերով, սրամտութիւններով, բանակումի տեսարաններով եւ յատկանշական կենդանի պատկերով մը «Բարձրացիր, Բարձրացուր» նշանաբանով:

Հայր Պարէտի պահպանիչէն եւ ամէնուն կողմէ երգուած «Հայր Մեր»էն ետք, սկաուտական վերին մարմնի առաջնորդութեամբ հիւրերը վերի յարկը բարձրացան, ուր նախապէս պատրաստուած հաւաքատեղիին բացումը կատարեց Պր. Քեթիթեան, աւանդական ժապուէնը կտրելով: Այդ հաւաքատեղին յետ այսօրեկ պիտի կոչուի իր անունով, արձանագրուած ցուցատախտակով մը, դրան կողքին: Նոյն հաւաքատեղիին մէջ ցուցադրուած էին արիւնքներու կողմէ պատրաստուած ձեռային հետաքրքրական եւ ճաշակաւոր աշխատանքներ: Պր. Քեթիթեան խորապէս տպաւորուած՝ պատմեց թէ ինչ պայմաններու տակ սկսած էր սկաուտական շարժումը, եւ ապա՝ իբրեւ քաջալերութիւն 500 տոլար նուիրեց անոր: Եղան նաեւ ուր՝ սրտաբուխ նուէրներ:

Ներկաները հիւրասիրուեցան սուրճով, զովացուցիչներով, սանտուիչներով եւ անուշեղէններով, որոնք պատրաստուած էին արիւնքներու եւ արեւունքներու Մնորաց Յանձնախումբին կողմէ:



ՏԵՂԵԿԱՏՈՒՆ ՎՏԱՐՈՎԻ ՀԷ

Ծնորհակալութեամբ կ'ընդունինք նուիրատուութիւններ, մեր այս ձեռնարկը աւելի ճոխ եւ շահեկան ընծայելու համար:

— Ասանալու համար դիմել խմբագրութեան, 15, Էմաս Էյ Տիմ փողոց Ա. յարկ — Գանիրէ



رقم الايداع بدار الكتب
1978/713
المطبعة الافريقية ت 938817